Արտադրական կարողությունների արդիականացման նպատակային ծրագիր

Նպատակ

Ապահովել մատչելի ֆինանսական միջոցներ տնտեսավարողներին՝ արտադրական կարողությունները արդիականացնելու, բիզնես գործընթացները թվայնացնելու, կազմակերպության արտադրողականությունը բարձրացնելու և նոր տեխնոլոգիաների ներմուծումը խթանելու նպատակով :

Շահառուներ

Նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող, ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

Օժանդակության ձևը

Նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների կողմից նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումների ձեռքբերման, դրանց մոնտաժման և սպասարկման դեպքում՝ կապիտալ շինարարության իրականացման, բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման և արտադրողականության բարձրացման համար խորհրդատվական ծառայությունների և փորձագետների ներգրավման նպատակով գործընկեր ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորում:

Արդիականացման Ծրագրի շրջանակում լիզինգի/վարկի սուբսիդավորման պայմանները

Սուբսիդավորման ժամկետ: 42 ամիս

Վարկի/լիզինգի պայմանագրի ժամկետ: 120 ամիս

Արժույթը	Վարկի Սուբսիդավորվող %դրույք	Լիզինգի Սուբսիդավորվող %դրույք	Սուբսիդավորման Ժամկետ
Դրամ	8%	10%	42 ամիս
Արտաժույթ	6%	8%	42 ամիս

* Կանոնադրական կապիտալում 200 մլն դրամից ավելի ներդրման դեպքում, սուբսիդավորման առավելագույն գումար է սահմանվում յուրաքանչյուր տնտեսվարողի համար ներդրման 5-ապատիկը, բայց ոչ ավելի քան 10 մլրդ դրամը (արտարժույթի վարկավորման դեպքում՝ 5 մլրդ դրամը) փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսվարողների՝ միջոցառման շրջանակում տրամադրված վարկի/լիզինգի սուբսիդավորվող մասի հանրագումարով: Նշված արտոնությունը չի տարածվում D և F ոլորտներում գործող տնտեսվարողների վրա:

Մինչև 6 ամիս

Մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված

Սուբսիդավորման Առավելագույն սահմանաչափը*

Ա) Մինչև 1 մլրդ դրամ– մեքենա/սարքավորում ձեռքբերելիս;
Բ) Մինչև 30% մեքենա/սարքավորման ձեռքբերման գնի-Կապիտալ շինարարության իրականացնելիս;
Գ) Մինչև 400մնլ.դրամ – բիզնես գործընթացների թվայնացման և արտադրողականության խթանման նպատակով խորհրդատվական ծառայություններ կամ փորձագետի ներգրավելիս:

Մինչև 180 օր

Մատակարարման փուլի սուբսիդավորում

Արդիականացման ծրագրի շրջանակներում նպատակային ոլորտները

B (ԲԻ) «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»

C(Սի) «Մշակող արդյունաբերություն»

F (ԷՖ) «Շինարարություն»

H (ԷՅՋ) «Փոխադրում եվ պահեստային տնտեսություն»

D (ԴԻ) «Էլեկտրականության,գազի, գոլոշու և լավորակ օդի մատակարարում»

G 45.2 (ՋԻ) «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»

J (ՋԵՅ) «Տեղեկատվություն և կապ»

M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»

Q (ՔՅՈՒ) «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»

I55(ԱՅ) «Կացության կազմակերպում» բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպում իրականացնող տնտեսվարողների

P (ՓԻ) «Կրթություն»

R (ԱՌ) «Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն»

N 77 (ԷՆ) «Վարձույթ և լիզինգ»

Միջոցառման շրջանակներում գործընկեր ֆինանսական կառույցներ

- «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
- «Ակբա բանկ» ԲԲԸ
- «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
- «Ամերիաբանկ» ՓԲԸ
- «Արարատբանկ» ԲԲԸ
- «Այդի բանկ» ՓԲԸ
- «Ինեկոբանկ» ՓԲԸ
- «Կամուրջ ՈՒՎԿ» ՓԲԸ
- «Յունիբանկ» ԲԲԸ
- «Ակբա լիզինգ» ՎԿ ՓԲԸ
- «Ֆասթ բանկ» ՓԲԸ
- «Արդշինբանկ» ՓԲԸ
- «Արմսվիսբանկ» ՓԲԸ
- «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ
- «Կոնվերս բանկ» ՓԲԸ
- «Էվոկաբանկ» ՓԲԸ
- «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «Էյչ-էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ
- «Արմենիան Լիզինգ Քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ
- «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա
- «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ

Նպատակային ծրագրից օգտվելու ընթացակարգը

Ֆինանսական կառույց

Տնտեսվարողը դիմում է Էկոնոմիկայի նախարարության գործընկեր ֆինանսական կառույց՝ նոր մեքենա-սարքավորումներ ձեռք բերելու կամ բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման և արտադրողականության խորհրդատվության համար սուբսիդավորվող վարկ կամ լիզինգ վերցնելու նպատակով:

Վարկի/լիզինգի ստացում

Ֆինանսական կառույցը՝ համաձայն իր ընթացակարգերի, իրականացնում է տնտեսավարողի վարկունակության և վճարունակության գնահատում և տնտեսավարողին տրամադրում է վարկ/լիզինգ:

Սուբսիդավորում

Ֆինանսական կառույցը Էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացնում տնտեսավարողի սուբսիդավորման հայտը և Էկոնոմիկայի նախարարությունը որոշման պայմաններին համապատասխան իրականացնում է վարկի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորում:

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=167054
011- 597-136
modernization@mineconomy.am